ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

Ապահ Հայկազունի

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

Ապահ Հայկազունի (ծննդյան և մահվան թվականներն անհայտ), Հայկ նահապետի որդին, Ապահունիների նախարարական տան հիմնադիրը:

Ապահ Հայկազունի
Ապահունիների նահապետ
Ազգություն հայ
Դինաստիա Հայկազունիներ
Հայր Հայկ Նահապետ

Անվան ստուգաբանությունը

Ըստ Հրաչյա Աճառյանի Ապահը կեղծ արական անուն է[1]: Ապահ անունը կազմել է Արսեն Բագրատունին իր «Հայկ դիւցազն» պոեմում, Ապահունյաց գավառի անունից, ենթադրելով թե Հայկ նահապետը ունեցել է այս անունով մի որդի[2]:

Մովսես Խորենացին գրում է՝.

> «Այլ և զնախարարութիւնս Ապահունեաց և զՄանավազեան և զԲզնունեանն՝ ի նոյն զաւակացն Հայկայ»[3]:

Քանի որ Մանավազյան և Բզնունի ազգանունները ծագում են Հայկ նահապետի Մանավազ և Բազ որդիների անուններից, ուստի՝ ըստ Արսեն Բագրատունու, Ապահունին էլ ենթադրում է Ապահ անունով մի որդի:

Ըստ Ղևոնդ Ալիշանը գրում է, որ Ապահունյաց գավառի անվան ծագումը հայտնի և ստույգ չէ: Նա գրում է՝.

> Հին բառակարգ աշխարհագիրն Հուն կամ Հոն կոչէ զշինողն Ապահունեաց, որ գուցէ Մանաւազայ որդի ըլլայ եթե ստոյգ է շինողը. վասն զի գաւառին անունն կարծել տայ թէ շինողն Ապահ պիտի կոչէր[4].

Ծանոթագրություններ

1. «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 1, Ցուցակ 1, էջ 192-193
2. «Հայկ դիւցազն», Արսեն Բագրատունի, 1940, էջ 610
3. «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Բ. ը
4. «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, 1904, էջ 159

Աղբյուրներ

- «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 1, Ցուցակ 1, էջ 192-193
- «Հայկ դիւցազն», Արսեն Բագրատունի, 1940, էջ 610
- «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Բ. ը
- «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, 1904, էջ 159

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Ապահ_Հայկազունի&oldid=7740000» էջից